ՃԱՆՃԻ ՄԸ ԹՌՉԻԼՆ

Ազատութիւն պիտի երկթեւեան մի-յան, որ զմարդս կը յուսահատցընէ, և մանաւանդ պէս կ'ընկճէ զնա իր յաճախ յարձակմամբքը, յորս միշտ ձանձրա-ցընելու չափը կ'աճեցընէ, և իր անթիւ խումբերը վնասելու համար բանեցուցած միջոցները կ'արհամարհէ։ Սաստուր և կարճ մարմնոյն խոտորնակ տրամա-դիծերը՝ յերիս մասունս իւր՝ լայն և դրեթէ հաւասար է. գլուխը և կուրծքը սեղոյն է և վերը սպիտակնիշ. թեւերն թափանցիկ են. կազմուածը թոյլ է։ Ճանճին բնաբանական յատկութիւնքն՝ ինքնին միայն զզուելի կ'ընեն զինքը, և զայն ատելու համար՝ հարկ չէ որ զինքը հանենք խեղդուած՝ դինիներնուս մէջէն և կամ եփած՝ ապուրին մէջէն, — որ ծանրատաղտուկ օր մը երբ անձեւելու վրայ է, ոգինիս քաղէ — որ երբ բաց բերնով չնշենք, օդոյն հետ մեկտեղ մտնէ մեր կոկորդին մէջ։

Սակայն ձանձրութեան օր մը, ինչպէս այս օր, քանի որ Լուսոյ անէն հեռու է, դբօնելու համար կրնամ աչքս ճանճի մը թռչնանայ եռանէն երթալ և կամաց կամայ թողուլ լքանել գիս խառնակ յիշատակաց՝ զոր կ'արթնցընեն յիս այն ա-ռարկաներն յորս ինքը կը հանդչի։

Յուրան, որ արդէն կը տիրէ յօդս, արգիլեց որ վերջին ձուոց հարնեակ-ներուն թոզածներն կատարեալ միմ-ատոյ փոխուին, — անոնք գեղեցիկ ե-դանակին դառնալուն պիտի ծնանին։ Empusa muscæ, խօսած միջատին պա-տառաբոյժ սունկը, իր տարեկան զոհերը ըրաւ. միով բանիւ այն ամէն ճանճքն որ չդասն անկիւն մը սրուն մէջ կարենան պատապարուիլ ձմեռն անցընելու հա-մար՝ ի ջերմութեան, արդէն ցրտէն մե-ռած են։ Այն զոր ես զննելու վրայ եմ, թերեւս մէկ հատիկն է որ գեռ կը թռչի սենեկիս մէջ։ Թռչելով և քալելով կա-տարած երթեւեկներն խիստ խառնաչը-փոթ են։ Լի երկմտութեամբ, կեղծ մե-ծամեծ աչքերովն, որ գլխոյն երեսին մասը կը ձեւացընեն, կը նայի զգուշա-թեամբ չորս դին։ — բայց հօս ոչ որ իրեն ներդութիւն պիտի տայ, միայն թէ նոյն ինքը կարի իմն նախատական համար-ձակութեամբ բթիս վրայ չի գայ։ Սե-նեակս պզտիկ է և ամփոփ, ուր կը տի-րէ այնպիսի լռութիւն՝ որ գրած ա-տենս գրչիս ճռնչիւնը կը լսեմ։ Սենեակս լուսաւոր է և բոլորովին մաքուր, և որ-չափ ալ պատերուն անկիւնները նա-յիմ, սարդից հետք մը չեմ գտներ։ Հօս չեն եներ շառաւներ՝ որ իր գլխիկովը զճանճը վախէն խենթեցընեն, և ոչ ալ թշնամիք կան՝ որ զինքը թակարդելու համար որոգայթ լարեն և յետոյ ե-տևէն վազելով վիրաւորեն զինքը թու-նաւոր ծամելքով և ծծին անյագաբար։ Ուրեմն պատճառ չկայ որ ճանճը շա-բունակէ գլուխը պատուհանիս ապա-կիներուն զարնելու՝ սաստիկ ըզգալով թոզ իր առջևի երկու թեւոց վրայ հա-ւասարակշիռ կենայ, որոնք միայն լաւ զարգացած են և թռչելու յարմարը, և զայնս ծածկող թեփից տակ ճոճե-ցընէ երկու կշռոցները՝ յորոց ձևացած են եաւի թևերն։ Ուզածին չափ կրնայ սենեակս կենալ և խաղաղութեամբ զբաղիլ կերպ կերպ թռչնանայ։

***

Այս գրած պզտի ճառս, կարծես թէ համոզեց զճանճը. պատուհանը թոզ-լով, սկսաւ անկիւնայս վրայ գտնուած օդոյն մէջ թռչիլ։ Անկողինս բարձր է, ամեն իրիկուն հօն ելլելու համար՝ պէտք եմ մտայ և մարմնոյ մեծ ճիգն թափել. — այլ 'ի փոխարէն, հաղիւ թէ վրան կ'երկնամ, անկողինը կը բանայ ինձի իր սիրալիր բազուկները, և ես խորագոյնս կ'ընկղմիմ՝ հօն, տե-սակ մ'անդնդոյ մէջ թաւալելով։ Ան-կողնոյն տակը, մահճին մէջ տեղը եր-կու մեծ արկղներով ձևացած է, որոնք

digitised by A.R.A.R.@

կը պարունակեն գրքեր, լրագրեր և ձեռագրեր։ Այսպէս՝ կրնամ պարծենալ թէ այնչափ ուսումնասէր եմ, որ ինչուան գրոց վրայ կը քնանամ, — որ ճշդիւ ըսել չէ՝ թէ գրքերը դիս կը քնացընեն։ Ամեն առաւօտ (կը հասկըցուի՝ որ երբ ամպ չըլլայ) կ'ընդունիմ անկողնոյս խորէն «ասատուած ափառ արիուն» ողջոյնը. անձեռոցով մը գլուխս կը ծածկեմ, և խորէն ելլելով, կը նշմարեմ թեզանին ետեւէն մեծագոյն ասողը, որ հրեղէն գնոյոյ մը պէս կը բարձրանայ տանց շարքի մ'ետեւէն՝ 'ի միոյ անթիւ ծխհանաց, որ զասանիս ցցունազարդ կ'ընեն։ Այլ ամեն բանէ աւելի դիս զըւարթացընող երբ անկողնոյս ծոյը խըրասուղած եմ, այն մտածութիւնն է որ վարի սենեկին մէջ ուրիշ անկողին մը կայ, որ կը համապատասխանէ իմինս գիրքով և ուղղութեամբ։ Քու անկողինդ է, Լուլու։ Այս մտածմունքս դիս կ'սրբէ և քունս աւելի կը դիւրացընէ։ կարեւոր վայրկենին արթընալով, դաւազանով կը զարնեմ տախտակամածին և շուտ մը կը լսեմ որ կը պատասխանէ ինձ սիրաշարժ զարնուածովք։ Քիչ մը ժամանակ ետքը սենեկիս դուռը կը բացուի, և դու, Լուլու, կը մտնես, քու քաղցր հայեցուածովդ և բնաւին բարեձև բերանովդ։ Կը բռնեմ ձեռքերդ և կը նայիմ քու պայծառ երեսդ, և այն առաջին վայրկենէն կը կրեմ քու ներկայութեդ բարերար ազդեցութիւնը։ Ես կը զգամ որ 'ի միտս իմ կը բարձրանայ կենաց արժէքը, և հոգին աւելի սաստիկ կերպով իմ անձիս խղճէն խայթեալ է և մորակեալ աշխատելու մեծ փափաքէ մը։

***

Հազիւ թէ ճանճը ժամանակ տուաւ ինձի մեր առաւօտներուն խնդալից պատկերը կոչելու, արդէն թոռեր է յանկարծական որոշողութիւն դէպ 'ի զգեստակալին ուղղութիւնը։ Իմ հանդերձանոցիս չորս կողմը կը պարտի, զոր վեր կը բռնեն երեք սեպ, և յետոյ կը կենայ «կարմիր վերարկուին» վրայ, որ կարծես թէ ազնիւ պատառ մ'է։ Ցիրաւի «դեղին օձիքն» բոլորովին եղուած է. բայց ազատերն, որ իրենց կը քաշեն որկորամոլ ճանճը, պիտի չարդելուն ինձի կարմիր վերարկուին վրայ կախելու շրդթայի մը առաջին օղակը, որուն կը վերաբերին կենաց գեղեցկագոյն յիշատակներն։

Զմեռ ատեն էր, Լուլու, երբ զքեզ տեսայ, և հագած էի իմ կարմիր վերարկուս, որ արդէն երկայն ժամանակէ 'ի վեր հաւատարմութեամբ կը ծառայէր իր տիրոջը։ Վարէն բաց կը մնային նիհար սրունքներն ինչուան ազդրներուն կէսը, և վերէն երկայն և թեմեկուած մանչերուն խոպոպքը կ'ինկնային։ Թաւամազ գլխոյն գագաթան վրայ կոկուզ գլխարկ մ'ունէր։ Իրաւ է որ թեզանիներն դարոյին գրասեղաններուն վրայ քսուելէն կը մաշէին, և թէ թեզանին վրայ եղուտ ըլլալէն զատ կը ժողվուէր այնչափ բազմութիւն դասերուն ուսումնական ցցուածքն մը (զոր հիմա ճանճը ճարպին հետ մէկտեղ կը ծծէ). — բայց վերարկուին ամբողջ իմաստութեամբն հանդերձ, Լուլու, ծիծաղելի էի ես։ Եւ սակայն դու դիս սիրեցիր։ Այսօր դիս փոխուած կը գտնեմ, թեզանիներն և օձիքն գործածելի, և կը ճանչնամ մկրատին և սանտրին կարեւորութիւնը։ Եթէ տժգոհութիւն մը պատճառեմ քեզի, այն ատեն է երբ կը դուշակեմ (դէպք որ քիչ կը հանդիպի) քու մտադրութիւնդ հանդերձանաց քանի մը մասին վրայ։ Կ'ուզես ամեն բանին վրայ դու միայն մտածել և հոգ տանիլ — այսպէս զկրիլլինոն երես առած տղայ (enfant gâté) մը դարձուցիր։

Այսօր ճանճն իմ պատմուճաններէս ախորժահամ բան մը պիտի չգտնէ, վասն զի խոզանակն զանոնք փայլեցուցած է, կամ թմրած պիտի մնայ պենծինայի հոտէն, որ հիմա միշտ կը բուրեն։ Եւ ահաւասիկ կարմիր վերարկուս կշտացած, թոզուց զգեստակալը ուրիշ աւելի հարուստ կերակրոյ աղբիւր մը փնտռելու։

digitised by A.R.A.R.@

***

Երկնցած և սրմկաձև ծռած ճանճին բերանը անհեղեղ լեզու մը կը կարծուի կարգէ դուրս մեծցած ատորին շրթունքը պատեանի ձև ունի, որ ուռուցիկ և մագաղաթ ղեղուառաջին ծայրը կը ստուարացընեն։ Թարիսիսը չրշաղատեալէ հաստելեաց և հնստրից վերաբերեալ կտորէ մը, 'ի ընէ միացեալ վերին շրթաւնց հետ, որ սլաքի մը պէս դուրս կը ցցուի և վերի կողմէն կը կատարելագործէ գլուխիթիրը։ Բերանին այս հանգամանաց հետ կը միանայ կորկորդի մասնաւոր փոփոխութիւն մը, որ փոխանակ մարսողական դրութեան երկայնութեան վրայ իրրև ծաւալումն որկորին յայորդելու, առանձինն կ'ունի ինչպէս երկայն և բարակ խողովակ մ'ունեցող քսակ մը, որ որկորին մէջ կը բացուի։ Ցիրկ ստամաքս մ'է։ — Երկիւղած չափէն աւելի, կարիւոր կազմածին պաշտօնները բացատրելու առաջնոյ, ճանճը ամէն կողմ իր կերակուրը կը փնտռէ և անդադար կ'ուտէ։ Ամէն տեսակ հեղուկ կը կլլէ և ամէն տեսակ թոյլ մարմին կը լիզէ։ Չկայ այնպէս գարշելի բան մը որ անհաճոյ ըլլայ շոշափելեաց և ճաշակելեաց ճանճին, մինչև մարդու կերակրոյն մասնակից ըլլալէն վերջը կ'երթայ նաև որսելու իրեն մարսողութենէն մնացուածոց մէջ։ Թերևս մաքրուելու ատեն, կը կըլլէ ճանճը իրեն թաթէն զգուշութեամբ վերցուցած աղտեղի մասնիկները։ Հաստատուն մարմնոց վրայէն կը սահի և կարծես թէ կ'ուզէ խարտեղով քաղել անոնց մակերևութենէն քիչ մը սնունդ։ Թէ որ ամէն կողմնէն չկարենայ ալ ցցել, գէթ կ'ապտոտէ մեր ամէն առաջկողքը այն պզտիկ սև կէտերով, որ իրաւը զուրցելով իրեն կոկղանքն են։ Քանի որ տարը կը հրաւիրէ 'ի զուգաւորութիւն, ճանճը մեր ծախքոնը միայն ինքզինքը սնուցանելէն զոհ չըլլալով, հոգ կը տանի իր ապագայ սերնդեան սնունդանը՝ հաւկիթները մեր կերակրոց վրայ դնելով։ Կրնաք դիտել այն ատեն գերազանց պզտիկ մը վրայ, զոր թերևս ամբախից փակեղիք, հետեւալ հետքերը՝ որ ատելի միջատին անդքին վկայք են։ Լուզական մարմինք, չեղնա կուտեալ կղկղանք և ճերմակ և փայլուն գէր որդեր։

Կարծես թէ սենեկիս ամենայն նիւթերն ճանճին հատուցելեաց և ճաշակելեաց հոտ և համ կու տան, որ իրեն այցելութիւնքը ընելու ժամանակ կը ճաճայ այլազան իրաց մէջ, խնամքը փակուած թղթէն, որուն մէջ կը դգայ թէ մեր հարիւրագրամ շաքարը կայ, քարէ յեշատակարանը կ'երթայ որ փառաւորապէս կը զարդարէ իմ գրասենեակս, զոր ես կը կաշեմ երկրահանգաքանական հաշաքուսնն (որէ եւգանեան քարէ խարսխով ծծըմբային ժայռէ կըտոր մը, մէջտեղը երկնագունի բիւրեղներով, և վերը թրաքիդէ պզտի խորանարդ մը)։ Հիմա ճանճը բերնին համը մեր կոնքակրին փոքր փոսին մէջ գրուած աճառէն կը գտնէ։

Կոնքակրէն կը ցատքի անկողնոյն քովի պզտի գարանին վրայ, ուր կը չոշղոնի իրեն չփուած անագէ փայլութեամբը մեր սուրճի մեքենայիկը, սկահակի մը մէջ ժողվուած կը տեսնուին մրուռներու, ցիրաւի երբեք ճանճը ինծի փորձ մը չի տուաւ իրեն իմաստութեանը, և ուղղայնին մասը շատ քիչ բան է համեմատութեամբ իր մէկալ ղղային դրութեան մասերուն և բոլոր մարմնոյն մեծութենն։ Սակայն կ'ուզեմ հաւատալ որ ճանճին այն իրեն ամէն մէկ անկիւն մասնելու՝ դիտելու համար է՝ թէ կերակուր կայ, և կարծեմ որ իրեն յարափոփոխ թռչանոքն փորձառութիւն կը հմտանայ։ Այս յայտնի է որ եթէ հիմայ միաք ունի մեր սուրճի մրուներէն ծծել ղղային սնունդը իրեն ղղաց կծիկներուն աշխատութիւն տալու համար, իրեն ունեցած յոյսերը պարապի պիտի ելլեն։ Արդէն ղուլու այն մրուններուն վրայէն կրկին և կրկին անգամ անցած է, զանոնք կրկին և կրկին եփած է՝ վերջին հարիւրագրամ սուրճին տեսողութիւնը երկար օր աւելի երկնցընելու համար։ — Խընայութիւն, կ'աղաղակէ ղուլու այն ա-

digitised by A.R.A.R.@

ռաքինութենէն ոգեորուած. — և ամեն ճաշէ եռբը վիճաբանութիւն մը կը սկսի հարկաւոր եղած փոչուին քանակութեան վրայ՝ զգալի համեմոյ փոքրագոյն ատիճանը՝ օշարակաց մեծագոյն զանդուածին աւելցընելու համար։

***

Հիմա կարդը գրքերուն եկաւ. — չեմ կարծեր որ ճաներ ուղենայ կատարելագործել մատուռական կրթութիւնը, որ սկսած էր «կարմիր վերարկուն» ծծելով, — աւելի սատուգապէս կոկից և աստառին վրայ քիչ մը փոչի մնացած պիտի ըլլայ, որ լուրի ջնջոցէն և աչքէն կը փախչի, և ճաներ կրնայ փափկանալ հոն։ Առաջին կոյսը, որ կ'ընդունի իւր այցելութիւնը և թուի ամենէն համեղաճաշակը, կը վերաբերի կենսագրական գիտութեանց և կը կենայ մնտուկիս լայն խուրին վրայ։ . . . . .

***

Հիմա ճաներ իրեն երկայն և թելակերպ զատի ոսկիներով և ոլոքներով և սրուակաձև զինեալ վերնաթաթերով կը թռչի — առանց սահելու պատուհանին ապակիներուն վրայ, — և վերջը կը դառնայ կարճ և դիւրաբեկ եղջիւրներէ ձևացած գլուխը անոնց վրայ զարնելու, ինչպէս թէ ուղենար դուրս ելլել։ Բայց դուրսն այնպիսի ցուրտ մը կ'ընէ որ զինքը կրնայ մեռցընել, և ես չեմ կրնար թողուլ իրեն որ այսպէս ելլէ, այսինքն առանց ուրիշ բանի մը զինքը կորսնցընելէ։ Նոյն իսկ այս ճանճրանալի պատճառաւ որ զբաղեցայ իրեն թռչանաց ետեւէն երթալով, ինքն ինծի աղնուագոյն բան մ'եղաւ և կրնայ ներկայացընել հոդեխուսական կենցաղ մէկ վայրկենին նիւթական յիշատակը, — և որովհետեւ ուրիշ կողմանէ ալ այսօրուընէ առաջ չմտածեցի միջատաբանական տուփերուս մէջ այսպիսի հասարակ երկրևեան միջատ մը դնել. — ցրտէն պաշտպանելու համար դիս սրունքներուս փաթթուած ծածկոյթը կը քակեմ, ոտք կ'ելլեմ, կը թողում գրասեղանը, և զգուշութեամբ պատուհանին կը մօտենամ, ձեռքս կ'երկնցընեմ ապակեաց վրայ և կը բռնեմ ճանճը, որ բոլոքելով կը բզզար։ Գնդասեղ մը կուրծքին մէջ մտնելով կը խոցէ զինքը. — և ահա իրեն մերձաւոր ազգակցաց երկթևեան միջատաց հաւաքման կարգին մէջ զետեղուած, որոնք են, Որճացուցիչ ձանձ (Musca rumitaria), ընտուար, կապոյտ փորով և սատակի ճերմակ գծերով, և Կայսր ձանձ (Musca Caesar) բոլորովին մեծաղական կապոյտ խոյոր Գառնեանեաց (Tabani) ետեր, որոնց կարճ գլուխներն ունին մեծամեծ աչքեր և վիրաւորելու համար կընճիթներ, և մեծանեաներն որ նոյնպէս երկթևեան են բայց մարմինին նուրբ է։

Ռուսիկ բանակաց. — Օրբատօրէ զօրաց տուեալ հաստատուն կերակուրն Եւրոպիոյ Յէրութեանց մէջ յետագայ համեմատութեամբ է։

Գերմանիոյ մէջ խաղաղութեան ժամանակ 750 կրամ է, հանդերձ աղով. և 850 կրամ պատերազմի ժամանակ։

Ֆրանսիոյ մէջ (բաց 'ի աղէն, գինւոյն և սուրճէն) 789 կր։

Պելճիոյ մէջ (բաց 'ի սուրճէն) 770 կր։

Գաղղիոյ մէջ (բաց 'ի գինւոյն գարեջրէն, կամ օղիէն) 661 կր. աղով հանդերձ։

Իտալիոյ մէջ (բաց 'ի սուրճէն, գինւոյն և աղէն) 637 կր։

Անգղիոյ մէջ (բաց 'ի սուրճէն, գինւոյն և թէյէն) 672 կր. աղով հանդերձ։

Ռուսիոյ մէջ 1019 կր։

Սպանիոյ մէջ (բաց 'ի սուրճէն) 900 կր։

Թուրքիոյ մէջ 698 կր. և 50 հարիւրորդակրամ։

Զուիցերիի մէջ (բաց 'ի չոքոլատէն և սուրճէն) 1062 կր։

Որով կը տեսնուի թէ լաւագոյն ռուճիկ ունեցողն զուիցերացի զինուորն է, իսկ նուազագոյնն իտալացին։

digitised by A.R.A.R.@